ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 397-Ա** **«29» մարտի 2024 թ.**

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ /ՀԱՎԱՍՏԱԳՐԻ/ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունվարի 14-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի /հավաստագրման/ համար քննությունների և հավաստագրման կազմակերպման, հավաստագրի դադարեցման, ինչպես նաև հավաստագրման լիազոր մարմնի կազմավորման և գործունեության» կարգի 41-րդ կետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու քննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով.
   1) Նախարարության անձնակազմի կառավարման վարչությանը՝ 2024թ. ապրիլի 1-ից ապրիլի 19-ը ներառյալ՝ քսանչորսժամյա ռեժիմով ընդունել հավակնորդների փաստաթղթերն առցանց՝ https://exams.emis.am/ հղումով:
   2) Մինչև 2024թ. ապրիլի 26-ը նախարարի հաստատմանը ներկայացնել հավաստագրման ժամանակացույցը:

2. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ համար հավակնորդների փաստաթղթերի ընդունման մասին հայտարարության տեքստը տեղադրել նախարարության կայքում և սահմանված կարգով ապահովել զանգվածային լրատվական միջոցներով հրապարակումը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

**ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

X _____